Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ
№ 11
(300)
2016 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ընտրվել է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ընտրվել է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ՝ ընդհանուր ֆիզիկա և աստղագիտություն մասնագիտությամբ:

ՌԳԱ-ի անդամների ընտրությունները տեղի են ունեցել սույն թվականի հոկտեմբերի 24-25-ին: Հաղթողների ցանկը հաստատվել է հոկտեմբերի 28-ին, ՌԳԱ-ի ընդհանուր ժողովում:

Ընտրվել է 62 արտասահմանյան անդամ: Այդ թվում՝ Նոբելյան մրցանակակիրներ, ֆիզիկոսներ Սերժ Արոշը (Ֆրանսիա), Մարտինուս Վելտմանը (ԱՄՆ), քիմիկոսներ Ռոջեր Կորնբերգը (ԱՄՆ), Ժան Պիեր Սովաժը (Ֆրանսիա), Դան Շեխտմանը (Իսրայել), տնտեսագետ Կեննետ Էռոուն (ԱՄՆ), Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր, ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Հենրի Քիսինջերը:

ՌԳԱ-ի արտասահմանյան անդամ են ընտրվել նաև ԱՄՆ-ի գիտությունների ակադեմիայի նախագահ Մարսիա Մակնուտը և Ավստրիայի գիտությունների ակադեմիայի նախագահ Անտոն Ցայլինգերը: Սպասվում է Անտոն Ցայլինգերի պաշտոնական այցը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ ընտրվելու կապակցությամբ ստացվել է ՌԴ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Ե. Ֆորտովի շնորհավորական հեռագիրը, որում մասնավորապես ասված է.

Մեծարգո պրոֆեսոր Մարտիրոսյան

Մեծ գոհունակությամբ հայտնում եմ Ձեզ, որ 2016 թվականի հոկտեմբերի 27-ի Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի որոշմամբ Դուք միաձայն ընտրվել եք Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմյան անդամ:

Այդ կապակցությամբ ընդունեցեք իմ ջերմագին շնորհավորանքները: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անունից մաղթում եմ Ձեզ ստեղծագործական նոր նվաճումներ: Ես համոզված եմ, որ մեր միասնական գործունեությունը պետք է նպաստի մեր երկրների միջև հետագա արդյունավետ գործունեության զարգացմանը:

Հարգանքներով Վ. Ե. ՖՈՐՏՈՎ, ՌԴ ԳԱ պրեզիդենտ
31 հոկտեմբերի, 2016 թ.

Պատվավոր կոչումներ

Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի կապակցությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով «Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչում է շնորհվել.

Մաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Բորիս Սերգեյի ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ** (ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտ)

Բանասիրության դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող **Վերժինե Գառնիկի ՍՎԱԶԼՅԱՆԻՆ**:

Նոբելյան մրցանակ 2016

2016 թ. Նոբելյան մրցանակը շնորհվել է՝

■ Քիմիայի բնագավառում՝ ֆրանսիացի Ժան Պիեռ Սովաժին, հոլանդացի Ֆրեյզեր Շտոդարտին և շոտլանդական ծագումով ամերիկացի Բեռնարդ Ֆերինգին՝ «մոլեկուլային մեքենաների նախագծման և սինթեզի համար»:

■ Ֆիզիկայի բնագավառում՝ ամերիկացի գիտնականներ Դեվիդ Թաուլեսին, Դունկան Հայդենին և Ջոն Կոստերլիցին՝ «տոպոլոգիական փուլային անցումների և մատերիայի տոպոլոգիական փուլերի տեսական բացահայտման համար»:

■ Բժշկության և ֆիզիոլոգիայի բնագավառում՝ ճապոնացի կենսաբան Յոսինորի Օսումիին՝ «աուտոֆագիայի մեխանիզմի հետազոտության համար»:

■ Տնտեսագիտության բնագավառում՝ բրիտանացի տնտեսագետ Օլիվեր Հարթին և ֆինն տնտեսագետ Բենգտ Հոլմստրեմին՝ «պարտավորագրերի տեսության զարգացման գործում ավանդի համար»:

■ Գրականության բնագավառում՝ ամերիկացի բանաստեղծ, հեղինակ-կատարող Բոբ Դիլանին՝ «ամերիկյան երգի ավանդույթում նոր բանաստեղծական լեզվի մշակման համար»:

■ Խաղաղության Նոբելյան մրցանակի է արժանացել Կոլումբիայի նախագահ Խուան Մանուել Սանտոսը՝ այս երկրի «Հեղափոխական բանակ» անվանումը կրող ուժերի հետ խաղաղության պայմանագիր կնքելու համար:

ՀՀ ԳԱԱ-ն խորացնում է համագործակցությունը Չինաստանի գիտական հաստատությունների հետ

Սույն թվականի նոյեմբերի 7-10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվիրակությունը՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի գլխավորությամբ այցելեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն: Այցի շրջանակներում ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը մասնակցեց Պեկին քաղաքում կազմակերպված Ազգային գիտական կազմակերպությունների առաջին միջազգային գիտական ֆորումին՝ նվիրված «Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու» նախաձեռնությանը:

Ֆորումի գլխավոր նպատակն էր ազգային ակադեմիաների և հետազոտական կազմակերպությունների միջև գտնել համագործակցության մեխանիզմներ՝ աջակցելու համատեղ հետազոտությունների իրականացմանը, կարողությունների զարգացմանը:

Ֆորումին մասնակցում էին 67 երկրների 420 ներկայացուցիչներ:

Ֆորումի քննարկման հիմնական ուղղությունները 4-ն էին՝

1. շրջակա միջավայր և կայուն զարգացում
2. ընդունելի և կանաչ տեխնոլոգիաներ
3. զարգացող հիվանդություններ և առողջություն
4. կարողությունների զարգացում, անձնակազմի թրեյնինգներ և հիմնարար հետազոտություններ:

ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը ֆորումին ներկայացրեց ՀՀ ԳԱԱ-ի կողմից իրականացվող շրջակա միջավայրի վերաբերյալ ուսումնասիրությունները և արդյունքները:

Ֆորումի ավարտին ընդունվեց «Չինաստանի և Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու երկրների միջև գիտության և տեխնոլոգիաների համագործակցության նոր էջ. Պեկին հռչակագիրը»: Հռչակագրով ֆորումին մասնակցող 20 ազգային գիտական և հետազոտական կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ՝ կոչ անելով միավորել ջանքերը՝ հանուն ընդհանուր զարգացման ուժեղացնել համագործակցությունը գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտում, ստեղծել համատեղ նորարարությունների իրականացման հարթակ և համագործակցության երկարաժամկետ մեխանիզմներ՝ կենտրոնանալով խոշոր մարտահրավերների հաղթահարման վրա, կազմակերպել համատեղ միջազգային ծրագրեր՝ հիմնված հավերժական արժեքների՝ խաղաղության և համագործակցության, թափանցիկության, ներգրավվածության, փոխադարձ ուսուցման և փոխշահավետության վրա:

Չինաստան այցի շրջանակներում ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը հանդիպում ունեցավ Չինաստանի գիտությունների ակադեմիայի և Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի նախագահների հետ: Կողմերը քննարկեցին երկու երկրների գիտությունների ակադեմիաների համագործակցության հնարավոր ուղղությունները, գիտական և հետբուհական կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ մոտ ապագայում Չինաստանի ակադեմիաների պատվիրակությունները կժամանեն Հայաստան՝ ամրապնդելու և խորացնելու երկու երկրների գիտական կառույցների միջև առկա համագործակցությունը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՊԱՆԹԵՈՆԸ

Պանթեոն բառը բազմիմաստ է: Հնում պանթեոն ասելով հասկանում էին որևէ ժողովրդի կամ կրոնի աստվածներին նվիրված տաճար, վայր, որևէ կրոնի բոլոր աստվածների ամբողջությունը: Հին Արևելքի ու անտիկ երկրներում պանթեոնն ունեցել է միասնական կրոն ստեղծելու և կենտրոնացված պետականությունն ամրապնդելու նպատակ: Այդպիսիք էին ողիմպականը՝ Հին Հունաստանում, Հռոմի պանթեոնը՝ Հռոմեական կայսրությունում, Մուսասիրի (Արդինի) տաճարը՝ Ուրարտուում կամ Արարատյան թագավորությունում, Աշտիշատի (Վիշապավան), Բագավանի (Դիցավան) տաճարները՝ Մեծ Հայքում և այլն:

Նոր ժամանակներում պանթեոն են կոչվում նշանավոր մարդկանց աճյունների ամփոփարանը կամ գերեզմանոց-հանգստարանը: Սովորաբար պանթեոնների են վերածվել պաշտամունքային շինությունները՝ վանքեր, եկեղեցիներ, տաճարներ:

1791 թ.-ից Փարիզի Ս. Ժենեեվի տաճարը դարձել է պանթեոն, որտեղ ամփոփվել են Վոլտերի, Ռուսսոյի, Հյուգոյի և այլ հռչակավոր մարդկանց աճյունները:

Հին Հայաստանում մ.թ.ա. IV-III դդ. Նեմրութ լեռան վրա է եղել Կոմմագենեի Երվանդունի արքայատան պանթեոնը: Մինչև IV դ. կեսը Դարանաղյաց գավառի Անիում՝ Անի-Կամախում, այնուհետ՝ Աղցում է գտնվել Արշակունի արքայատոհմի պանթեոն-հանգստարանը: Նման հանգստարաններ են ունեցել հայ իշխանական տոհմերը, հոգևոր-կրոնական խոշոր գործիչները՝ Էջմիածնի Մայր տաճար, Մշո Ս.Կարապետի վանք և այլն: Հայ արվեստի ու գրականության մեջ հավերժ ներկայություն դարձած անհատների պանթեոն է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատունը, ուր հանգչում են ավելի քան երեսուն հայ երախտավորներ:

Սակայն կա մի վայր, որը հայ մեծերի գլխավոր հանգստարանն է և դասվում է հայոց սրբավայրերի շարքը: Դա մեր մայրաքաղաքի՝ Կոմիտասի անունը կրող զբոսայգու պանթեոնն է:

Զբոսայգու տարածքը մինչև անցյալ դարի 30-ականների կեսերը եղել է հին գերեզմանատուն, կոչվել է «Մլեր»: Ռուսական տիրապետության հաստատումից հետո այստեղ թաղվել են նաև ռուսներ: 1930 թ. Երևանի քաղխորհրդի գործկոմը որոշում է փակել գերեզմանատունը. տեղում հիմնադրվում է զբոսայգի: Խորհրդահայ կառավարությունը հայտարարությամբ դիմում է բնակչությանը՝ տեղափոխել իրենց հարազատների աճյունները: Ասում են՝ հին գերեզմանատունը ցանկապատված էր: Միջնամասում՝ այսօրվա զբոսայգու կենտրոնական մուտքի դիմաց, կար եկեղեցի, որի մոտ՝ մի առանձին հատվածում, ամփոփված էին օտարազգիների աճյունները: Գերեզմանատան փակումից և աճյունների տեղափոխումից հետո եկեղեցին ու ցանկապատը քանդվում են:

Քաղաքային իշխանությունները աճյունները և տապանաքարերը տեղափոխելու համար հատկացնում են փոխադրամիջոցներ (սայլեր), յուրաքանչյուր գերեզմանի համար վճարում 5 ռուբլի: Հանգուցյալների հարազատները գրավոր հաստատում են, որ չեն բողոքում գերեզմանների տեղափոխման դեմ: Բնակիչները կարող էին հատը 10 կոպեկով գնել գերեզմանատան քանդվող ցանկապատի քարերը և օգտագործել իբրև շինանյութ:

1930 թ. գարնանը ՀԿԿ Կենտկոմի՝ ժողովրդի անսահման սերն ու հարգանքը վայելող առաջին քարտուղար Աղասի Խանջյանի առաջարկությամբ նորաստեղծ այգու մի անկյունը վերածվում է գրականության և արվեստի գործիչների գերեզմանատան: Իբրև տարածք ընտրվում է բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի գերեզմանի շրջակայքը: Ապա սկսվում է այնտեղ թաղված հանգուցյալների տեղափոխումն ու տարածքի մաքրումը. 1932-35 թթ. վախճանված հայ մշակույթի մեծերի մարմինները ժամանակավորապես ամփոփում էին հին գերեզմանատանը:

Պանթեոն անվանումը (Երևանի գերեզմանատան պանթեոն) խորհրդահայ մամուլում առաջին անգամ հիշատակվում է 1935 թ.՝ Ալեքսանդր Շիրվանզադեի թաղման կապակցությամբ: Մինչ այդ մահկանացուն կնքած Ստեփան Մանուկյանի թաղման կապակցությամբ գործածվել է Նոր գերեզմանատուն անվանումը:

1936 թ. այստեղ է վերաթաղվում մեր երաժշտական ինքնության անձնագիրը տված հանճարեղ Կոմիտասը: Այդուհետ նրա սուրբ գերեզմանի շուրջն են ամփոփվում մյուս հայ մեծերի աճյունները՝ կարծես եղեռնամահ հանճարին միայնակ չթողելու նպատակով:

1936 թ. ստալին-բերիայական ջարդարար մեքենային զոհ է գնում ժողովրդի սիրելի ղեկավարը՝ Աղասի Խանջյանը: Վերջինիս եղերական վախճանից հետո՝ մինչև 1957 թ.՝ Ավետիք Իսահակյանի մահը, պանթեոնում թաղումներ չեն կատարվում: Ստալինի մահվանից (կամ սպանությունից) և Բերիայի գնդակահարությունից հետո վարպետի մահվան կապակցությամբ Գրողների միությունը դիմում է Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ խնդրելով թույլատրել մեծ գրողի մարմինն ամփոփել Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Մինչ 1936 թ. զբոսայգու տարածքում՝ հին գերեզմանատանը, ժամանակավորապես թաղված գործիչների շիրիմները տարիներ շարունակ մնացել էին անուշադրության մատնված: 1963 թ. որոշվում է պանթեոնը բարեկարգել: Նախագծվում և 1969 թ. կառուցվում են տուֆակերտ հյուսիսային պատը (ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքչյան, քանդակագործ՝ Ռուզան Քյուրքչյան), միջնապատը, բեմահարթակը և ջրավազանը: Շինարարական աշխատանքների ընթացքում տեղափոխվում են նաև «ժամանակավորապես» թաղված մյուս հայ երևելիների շիրիմները:

Ներկայիս պանթեոնի շիրիմների 10-ից ավելին գտնվում էին զբոսայգու տարբեր մասերում՝ առավելապես կենտրոնական մուտքի մոտակայքում: Շուշանիկ Կուրղինյանի գերեզմանի շրջակայքում միշտ գեղեցիկ ծաղիկներ էին աճեցվում. բանաստեղծուհու կիսանդրին և մոտակա փոքրիկ հրապարակը այգուն յուրահատուկ

տեսք էին տալիս. Կուրղինյանի գերեզմանը չի տեղափոխվել:

1993 թ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանի նախաձեռնությամբ կառուցվում է պանթեոնի արևմտյան պատը (20 մ երկարությամբ)՝ հայոց մեծերի հանգստարանը սահմանազատելով հարակից առանձնատներից, սկիզբ դնելով պատերի հետագա վերակառուցմանը՝ հաջորդ քաղաքապետների օրոք: Առհասարակ, Երևանի տարբեր քաղաքապետների կառավարման տարիներին այս նվիրական վայրը տարբեր չափերով բարեկարգվել է:

1998-99 թթ. շարունակվում է արևմտյան պատի կառուցումը, դրան է միացվում հարավային պատը, քանդվում պանթեոնի միջնապատը և բետոնե բեմահարթակը. ջրավազանը լցվում է հողով: Պանթեոնը, ուր իրենց հավիտենական հանգիստն են գտել բազմաթիվ հայ մեծեր, 2007 թ. ցանկապատվում է 3 կողմից:

Նույն թվականին, ինչպես և հետագա տարիներին, հայ մեծերի աճյունների ամփոփարանն ստանում է քրիստոնեական տեսք. կառուցվում են խաչաձև բացվածքով ու խաչքարով պատերը, մյուս պատի վրա դրվում է քարե խաչ:

Պանթեոնի տարածքը, որը 27000 քառակուսի մետր է՝ նախկին 3000-ի փոխարեն, գտնվում է «Երևանի քաղաքապետարանի բնակչության հատուկ սպասարկման» պետական փակ բաժնետիրական ընկերության ենթակայության ներքո: Այս ենթակառույցն է կատարում վերանորոգման աշխատանքները:

Պանթեոնում այս կամ այն գործչի աճյունն ամփոփելու որոշումը կայացնում է կառավարությունը: Վերջինիս որոշմամբ՝ թաղման հանձնաժողովի նախագահը հանգուցյալի հարազատների հետ ընտրում է գերեզմանի տեղը: Առաջին հայորդին, որի մարմինը հանգչում է պանթեոնում, համարվում է Կոմիտասը: Պանթեոնի պատի մեջ են ամփոփված վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանի մասունքները:

Հայ ժողովրդի և, առհասարակ, համաշխարհային պատմության մեջ հետագիծ թողած մեր երևելիների հանգստարանը միշտ մարդաշատ է. բազմաթիվ դպրոցականներ՝ Երևանից, մարզերից՝ անգամ հեռավոր, երկրորդ հայկական հանրապետությունից՝ Արցախից, հայ և օտարազգի զբոսաշրջիկներ, քաղաքացիներ: Հոբելյանական օրերին այցելություններ են կատարվում պանթեոն, ծաղիկներ դրվում մեր մեծերի շիրիմներին: 40 տարի պանթեոնի վարիչ հանդիսացող Գրիշա Հունանյանի խոսքով՝ մշակույթի նախարարությունը, հատկապես գրողների հոբելյանների առթիվ, միշտ կազմակերպում է միջոցառումներ:

Մեր երջանկահիշատակ հայրապետներից մեկը՝ Խրիմյան Հայրիկը, ասում էր. «գերեզմաններն էլ մեզ համար մի խոսուն դասարան են»:

Պանթեոնում իրենց վերջին հանգիստը գտած հայ մեծերի կյանքն ու գործունեությունը թեկուզ համառոտ ներկայացնելը յուրօրինակ դաս է դպրոցականների, մատաղ սերդնի ներկայացուցիչների համար՝ հայրենասիրության, մշակութասիրության, քաղաքացի լինելու դաս:

Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում թաղված են բանաստեղծ, խորհրդային պետական գործիչ Վահան Տերյանը (1885-1920), արձակագիր, թատերագիր, գրականագետ Վրթանես Փափազյանը (1866-1920), բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ Հովհաննես Հովհաննիսյանը (1864-1929), Ստեփան Մանուկյանը (1901-1930), ազգագրագետ, բանահավաք, հնագետ Երվանդ Լալայանը (1864-1931), պատմաբան, գրող, հրապարակախոս, գրականագետ Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860-1932), ճարտարապետ, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորոմանյանը (1864-1934), երաժշտագետ Վասիլ Ղորղանյանը (1865-1934), երգիչ-խմբավար, երաժիշտ, ազգագրագետ, երգահան Ստեփան Դեմուրյանը (1872-1934), մանկագիր, ուսուցիչ Խնկո Ապերը (Աբաբեկ Խնկոյանը, 1870-1935), երգահան, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ Ռոմանոս Մելիքյանը (1883-1935), երաժշտագետ, երգահան, խմբավար, մանկավարժ Սպիրիդոն Մելիքյանը (1883-1935), երգահան, երաժիշտ-բանահավաք, երգիչ, խմբավար, մանկավարժ Կոմիտասը (1869-1935), արձակագիր, թատերագիր Ալեքսանդր Շիրվանզադեն (1858-1935), գրականագետ, թարգմանիչ Ցոլակ Խանզադյանը (1886-1935), ֆիզիոլոգ Տիգրան Մուշեղյանը (1886-1935), ճարտարապետ, Երևանի առաջին գլխավոր հատակագծի հեղինակ Ալեքսանդր Թամանյանը (1878-1936), դերասան Հովհաննես Աբելյանը (1865-1936), նկարիչ Եղիշե Թադևոսյանը (1870-1936), նկարիչ Վրթանես Ախիկյանը (1872-1936), պատմաբան, բանաստեղծ, աղբյուրագետ Հակոբ Մանանդյանը (1873-1952), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ Ավետիք Իսահակյանը (1875-1957, 1966 թ. նրա կողքին թաղվեց կինը՝ Սոֆյա Իսահակյանը), դերասան Հրաչյա Ներսիսյանը (1895-1961), արձակագիր, թարգմանիչ Ստեփան Զորյանը (1889-1967. հետագայում նրա կողքին թաղվել է կինը՝ Սաթենիկ Զորյանը), դերասան Վահրամ Փափազյանը (1888-1968), գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը (1880-1972. հետագայում նրա կողքին թաղվել է կինը՝ Լուսիկ Սարյանը), խորհրդային կուսակցական և պետական գործիչ Գրիգոր Արզումանյանը (1919-1976), բեմադրիչ, թատերական գործիչ Վարդան Աճեմյանը (1905-1977), դերասանուհի Արուս Ասրյանը՝ Վարդան Աճեմյանի կինը (1904-1987), արձակագիր, թատերագիր Վիլյամ Սարոյանը (1908-1981), բանաստեղծ Հովհաննես Շիրազը (1914-1984), երգահան, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ Արամ Խաչատրյանը (1903-1978), դերասան, բեմադրիչ Հրաչյա Ղափլանյանը (1923-1988), կինոբեմադրիչ Սերգեյ Փարաջանովը (1924-1990), բանաստեղծ Համո Սահյանը (1914-1993), դերասան Միհր Մկրտչյանը (1930-1993), բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս Վահագն Դավթյանը (1922-1996), արձակագիր Սերո Խանզադյանը (1915-1998), պետական գործիչ Կարեն Դեմիրճյանը (1932-1999), արձակագիր Հրանտ Մաթևոսյանը (1935-2002), դերասան Խորեն Աբրահամյանը (1930-2004), նկարչուհի Մարիամ Ասլամազյանը (1906-2006), բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը (1919-2006), նկարիչ Էդուարդ Իսաբեկյանը (1914- 2007), օպերային երգչուհի Գոհար Գասպարյանը (1924-2007), ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը (1951-2007), դիրիժոր Օհան Դուրյանը (1922-2011), երգահան Ալեքսանդր Հարությունյանը (1920-2012), երգահան, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Էդվարդ Միրզոյանը (1921-2012), նկարիչ Հակոբ Հակոբյանը (1923-2013), դերասան Սոս Սարգսյանը (1929-2013), ճարտարապետ Ջիմ Թորոսյանը (1926-2014), երգահան Կոնստանտին Օրբելյանը (1928-2014), դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը (1928-2015), օպերային երգիչ, բեմադրիչ Գեղամ Գրիգորյանը (1951-2016), երգչուհի Օֆելյա Համբարձումյանը (1925- 2016):

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Ռուբեն ԱԶԻԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Իլյիչի Ազիզյանը ծնվել է 1961 թվականին Երևանում, բժիշկների ընտանիքում:

Հայրը՝ Իլյիչ Բաբկենի Ազիզյանը, եղել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի քիթ-կոկորդ-ականջ մանկական հիվանդությունների ամբիոնի վարիչը, Հայաստանի առողջապահության նախարարության մանկական գլխավոր օտոլարինգոլոգը: Մայրը Երևանի պետական համալսարանի բջջաբանության և գենետիկայի ամբիոնի դոցենտ էր:

Ռուբեն Ազիզյանը 1978 թ. ավարտելով Երևանի Ա. Պ. Չեխովի անվան թիվ 55 դպրոցը, ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետ, որն ավարտել է 1984 թ.: Նույն թվականին ընդունվել է կլինիկական օրդինատուրա քիթ-կոկորդ-ականջ ուռուցքաբան մասնագիտությամբ՝ Հայկական ԽՍՍՀ-ի առողջապահության նախարարության գիտահետազոտական ճառագայթաբանության և ուռուցքաբանության բազայի հիման վրա ստեղծված ինստիտուտում: Նույն թվականին Ռուբեն Ազիզյանը գործուղվել է սովորելու ԽՍՀՄ առողջապահության նախարարության բժիշկների կատարելագործման քիթ-կոկորդ-ականջ հիվանդությունների կլինիկայի կենտրոնական ինստիտուտի օրդինատուրա: Հենց այստեղ էլ Ռուբեն Ազիզյանը մեծ հաջողությամբ 1989թ. պաշտպանել է իր գիտական ատենախոսությունը «Доброкачественные опухоли и опухолеподобные новообразования уха» թեմայով: Վերադառնալով Հայաստան նա աշխատանքի անցավ Հայաստանի առողջապահության նախարարության գիտահետազոտական ճառագայթաբանության և ուռուցքաբանության ինստիտուտում:

1994 թ. Ռուբեն Ազիզյանը ընդունվում է Ն. Ն. Բլոխինի անվան Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ուռուցքաբանության գիտական կենտրոնի դոկտորանտուրան գիտահետազոտական աշխատանքները շարունակելու նպատակով: 1997թ. նա պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը «Комбинированные реконструктивные операции при опухолях головы и шеи», որի արդյունքները ստացել էր տարիների ընթացքում իրականացրած բազմաթիվ վիրահատությունների շնորհիվ:

Ռուբեն Ազիզյանը անցնելով պրոֆեսոր Ռ. Ս. Պողոսովի, պրոֆեսոր Գ. Ռ. Ֆալիլովայի, պրոֆեսոր Ե. Գ. Մատյակինայի գիտական դպրոցը, հանձն առավ աշխատել կլինիկական ուռուցքաբանության՝ բժշկության ամենածանր ոլորտներից մեկում:

Դոկտորականը պաշտպանելուց հետո Ռուբեն Ազիզյանը աշխատանքի անցավ Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի համակարգի Ն. Ն. Բլոխինի անվան ուռուցքաբանության գիտական կենտրոնում՝ սկզբից որպես բժիշկ-վիրաբույժ, այնուհետև ավագ գիտաշխատող (1998 թ.), առաջատար գիտաշխատող (1999-2015 թթ.): Ներկա պահին Ն. Ն. Բլոխինի անվան Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի գանգ-ծնոտ-դեմք վիրաբուժական բաժանմունքի ղեկավարն է:

Ռուբեն Ազիզյանը այս տարիներին ձեռք բերած գիտելիքները փոխանցում է նաև ուսանողությանը: 2007 թ. նա ԲՈՀ-ի կողմից ստացել է պրոֆեսորի կոչում, իսկ մինչ այդ՝ 2000-2007 թթ. դասավանդում էր Մոսկվայի պետական բժշկա-ատամնաբուժական համալսարանում: Նրա դասավանդման առարկայի հիմնական թեման եղել է դեմքի շրջանի ծնոտի հատվածի ուռուցքները:

Այս տարիների ընթացքում արդեն կայացած գիտնական և հայտնի վիրաբույժ Ռուբեն Ազիզյանը հրատարակել է 105 գիտական աշխատանք Ռուսաստանի և արտասահմանյան գիտական ամսագրերում և պարբերականներում, համահեղինակ է «Реконструктивные операции при опухолях головы и шеи» գրքի, հեղինակ է մեկ մենագրության, 6 դասագրքի և 4 արտոնագրի:

Արդյունավետ գիտական աշխատանքից զատ Ռուբեն Ազիզյանը իրականացնում է նաև շատ կարևոր մի առաքելություն՝ պատրաստում է կադրեր այդ նույն ոլորտի համար: Այս տարիների ընթացքում նրա ղեկավարությամբ պաշտպանել են գիտությունների թեկնածուական 6 և մեկ դոկտորական ատենախոսություններ:

Միևնույն ժամանակ նա Ռուսաստանի ուռուցքաբանության ասոցիացիայի ընկերության անդամ է, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի գլխի և վզի չարորակ ուռուցքների գիտական խորհրդի նախագահի տեղակալը:

Ռուբեն Ազիզյանի իրականացրած աշխատանքը բարձր է գնահատվում ինչպես Ռուսաստանի Դաշնությունում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: 2003 թ. Ռուբեն Ազիզյանը Ռուսաստանի բժշկա-տեխնիկական ակադեմիայի ակադեմիկոս է, 2006 թ. նա պարգևատրվել է ոսկե մեդալով, որը նվիրված էր Հայաստանի առողջապահության նախարարության Ուռուցքաբանության գիտական կենտրոնի 60 ամյակին, 2012թ. պարգևատրվել է Ն.Ն. Բլոխինի 100-ամյակի նվիրված մեդալով:

Հաշվի առնելով Ռուբեն Ազիզյանի գիտական վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Ռուբեն Ազիզյանը այսօր էլ մեծ ջանքեր է ներդնում առողջապահության, ուռուցքանաբության ոլորտում նոր գիտական մշակումներ իրականացնելու գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական և առողջապահական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտքարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կայացավ ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի 55-ամյակին նվիրված միջազգային դպրոց-սեմինար

Ս. թ. հոկտեմբերի 25-ին Գյումրիում մեկնարկեց ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի 55- ամյակին նվիրված «Սեյսմիկ ինտենսիվության սանդղակի կատարելագործման հիմնախնդիրները» առաջին միջազգային դպրոց-սեմինարը:

ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը հիմնադրվել է 1961 թ.-ին: Ինստիտուտը զբաղվում է ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի և նրանում ընթացող պրոցեսների ուսումնասիրմամբ, ՀՀ տարածքի ուժեղ երկրաշարժերի սեյսմիկականության և լարվածադեֆորմացիոն վիճակի հետազոտմամբ, հետախուզական երկրաֆիզիկայի նոր մեթոդների, էկոերկրաֆիզիկական հետազոտությունների մեթոդիկայի մշակմամբ, սեյսմիկ վտանգի և ռիսկի, սեյսմիկ ազդեցությունների պարամետրերի քանակական գնահատման մեթոդների մշակմամբ և կատարելագործմամբ, երկրաֆիզիկական սարքաշինությամբ և այլն:

Միջազգային դպրոց սեմինարի ընթացքում ավելի քան 30 գիտական զեկուցումներով հանդես եկան Հայաստանի և Ռուսաստանի գիտնականները:

Միջազգային դպրոց-սեմինարի կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱԱ քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը, ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր»-ը, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը, «Հայաստանի երիտասարդական հիմնադրամը»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Երևանում կայացավ «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությանը նվիրված միջազգային գիտաժողով

Սույն թվականի նոյեմբերի 10-ին, Անի Պլազա հյուրանոցում տեղի ունենցավ «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությանը նվիրված միջազգային գիտաժողով:

Միջոցառման նպատակն է ներկայացնել «Հորիզոն-2020» ծրագիրը և ասոցացման կարգավիճակից բխող մասնակցության լրացուցիչ հնարավորությունները, որոնք կնպաստեն հետազոտությունների, նորարարության և միջազգային համագործակցության խթանմանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, INCO NET EaP նախագծի գիտական համակարգող Ջորջ Բոնասը:

Նոյեմբերի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունենցավ «Հորիզոն-2020» ծրագրին նվիրված թրեյնինգ-սեմինար, որտեղ ներկայացվեց ծրագրի մասնակցության հարցերի վերաբերյալ մանրամասն տեղեկություն:

2016 թ. մայիսի 19-ին Բրյուսելում ստորագրվել է Եվրամիության հետազոտությունների և նորարարությունների «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության մասին համաձայնագիրը:

«Հորիզոն-2020» շրջանակային ծրագիրը նախատեսված է 2014-2020 թթ. համար: Ծրագրի ընդհանուր բյուջեն 70 միլիարդ եվրո է: Ծրագիրը համաեվրոպական համագործակցային գիտահետազոտական նախագծերի ֆինանսավորման հիմնական գործիք է: Ասոցացված երկրի կարգավիճակը Հայաստանի գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, փոքր և միջին ձեռնարկություններին և անհատ գիտնականներին հնարավորություն կտա լիարժեքորեն օգտվել ծրագրի բոլոր հնարավորություններից ԵՄ անդամ պետությունների և ծրագրին ասոցացված մյուս 16 երկրների կազմակերպությունների համար նախատեսված պայմաններով:

Միջոցառումը կազմակերպվել էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասնակցությամբ ԵՄ 7-րդ Շրջանակային ծրագրի «Գիտության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտում համագործակցության ցանց Արևելյան գործընկերության երկրների համար» (FP7 INCO NET EaP Project) նախագծի շրջանակներում, Հայաստանի շահագրգիռ գերատեսչությունների և Հայաստանում ԵՄ պատվիրակության հետ սերտ համագործակցությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՑ ՀՈԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ՝ ԱՆԻՄԱՍՏ Է

Մարդկության պատմության մեջ սերնդափոխությունը մոտավորապես 20-25 տարին մեկ տեղի ունեցող գործընթաց է: Այնպես որ, դասական հայ սփյուռքը՝ որպես Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենազրկված և աշխարհով մեկ սփռված հավաքականություն, արդեն թևակոխել է 4-րդ-5-րդ սերունդը, որը, մասնավորապես Արևմուտքի երկրներում, վերասերվում է առավելապես օտար ամուսնությունների հետևանքով ծնված խառնածին, հետևաբար և պարբերաբար փոխակերպվող (տրանսֆորմացիա) ու տարաշերտվող ինքնությամբ, օտարախոս, օտարացած հավաքականության՝ իր ազգային պատկանելության խորհրդանշական (սիմվոլիկ), հաճախ՝ անորոշ կամ սոսկ հանրահաշվական ընկալմամբ (2/4-ով, 3/4-ով, 3/5-ով, 4/5-ով հայ և այլն):

Օտարության մեջ խառնամուսնությունները, ցավոք, անխուսափելի են, և դրանք կասեցնել ի վիճակի չեն ո՛չ ամենազորավոր եկեղեցին, ո՛չ ամենաազգային կուսակցությունները, ո՛չ ազգային դպրոցը, ո՛չ մամուլը, ո՛չ ընտանիքը: Ինչպես Լևոն Շանթն է բնութագրել. «Խառնազգի ընտանիքը Բաբելոն մըն է»: Եվ այսօր մեր հայ սփյուռքի գերակշիռ մասը փաստացի ապրում և գործում է այդ Բաբելոնի մեջ՝ հիմնականում չուզենալով գիտակցել, որ հետզհետե կտրվում և ընդմիշտ կտրվելու է իր ազգային արմատներից, Հայրենիքից:

Ներկայիս գլոբալ միջավայրում գործող սփյուռքահայ զանգվածային լրատվության մեջ այդ փաստը թերևս չի շոշափվում, չի ահազանգվում, ցանկալի չէ, ընդհակառակը՝ ներհամայնքային օրախնդիր հարցերն այլևս ինքնահոսի են թողնված, փոխարենը նախընտրելի են դարձել ներհայաստանյան զարգացումների վրա գերազանցապես արևմտյան տերությունների դիտակետից, հետևաբար և՝ կողմնակալ անդրադարձներ կատարելը: Այդ ամենը, անշուշտ, նպատակ է հետապնդում արտերկրի հայության շրջանում սառեցնել, բթացնել Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) նկատմամբ հայրենասիրական զգացումները, սփյուռքը գաղափարապես անջրպետել հայրենի երկրից, հետևաբար և կանխել, բացառել սփյուռքը վերահաս ծուլումից փրկող թերևս միակ միջոցը՝ հնարավոր հայրենադարձությունը:

Այդ ամենի հետևանքով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում առկա բացառապես մահմեդական միջավայրի «շնորհիվ» տակավին հայապահպանված հայությունը, Արևմուտքի առավելապես «քրիստոնեական» և գերազանցապես «ազատական» իրականության մեջ հայտնվելով, բազմաթիվ ու բազմապիսի ընտրություններ ունենալով և ազգային կառույցների հետ քիչ թե շատ առնչվելով (եթե, իհարկե, սերունդները տակավին առնչվում են. դա կախում ունի կրոնադավանական բազմազանությունից, սոցիալ-մշակութային միջավայրից, արագընթաց համահարթեցնող համաշխարհայնացումից, անհատական գործոնից և այլն), մի որոշ ժամանակ դեռ կարող է պահպանել իր ազգային ինքնության ու ազգային ինքնագիտակցության տարրերը, սակայն իրար հաջորդող սերնդափոխությունն ու այլէթնիկ խառնամուսնությունները, մայրենի լեզվի խորհրդանշական իմացությունը կամ ընդհանրապես կորուստը, Արևմուտքի հայությանը գիտակցական հայից հետզհետե վերածել, վերածում և շարունակելու են վերածել «սիմվոլիկ»՝ զգացական հայության, ապա նաև՝ «ձուլված, համահարթեցված» հավաքականության:

Ի դեպ, ժամանակի ընթացքում միևնույն «համահարթեցման», «սիմվոլիկացման» անխուսափելի ընթացքն է սպասվում նաև նորանկախ Հայաստանից արտագաղթած հայերին, որոնք դեռևս ապրում են օտարության մեջ համայնքային կյանքում ներգրավվելու կամ իրենցը ստեղծելու նախասկզբնական՝ «ռոմանտիզմի» ժամանակաշրջանում (1-ին և 2-րդ սերունդ), այսինքն, երբ հույս ունեն, որ ինչ-որ չափով առնչվելով արդեն իսկ գոյություն ունեցող ազգային կառույցների հետ, կամ՝ հիմնելով նորերը, մասնավորապես արևելահայկական, կամ՝ բացառապես հայեցի ընտանեկան միջավայրի առկայության պայմաններում կարող են սերունդներին պահպանել տալ հայկական ինքնությունը:

Ցավոք, «սիմվոլիկ» հայի վերածվելը, ապա և ազգային ինքնության հետզհետե կորուստը, հայ սփյուռքի ձուլման, անհետացման գործընթացի անբաժանելի, անխուսափելի և պատմական բոլոր ժամանակներով փորձված անկասելի ու պարտադիր գործընթաց է, որը կախում ունի միայն ժամանակից՝ սերնդային աստիճանից և խառնամուսնությունների մակարդակից: Իսկ որ արդյունքը՝ ձուլումը, անշրջելի է հավասարապես բոլորի համար, դա աքսիոմ է:

Ընդհանուր հաշվարկներով, եթե Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված հայության շրջանում, առավելապես Արևմուտքի երկրներում, «սիմվոլիկ» հայության վերածման գործընթացը զգալի էր առավելապես 3-րդ սերնդից, ապա նորանկախ Հայաստանից արտագաղթած հայության շրջանում այդ շեմը նվազելու միտում ունի:

Միաժամանակ, քանակական և որակական առումներով հայ սփյուռքն արտաքուստ «թարմացնելու» տեսակետից նշանակալի դեր են կատարել և շարունակում են կատարել Մերձավոր և Միջին Արևելքից, ինչպես նաև Հայկական ԽՍՀ-ից, ապա՝ ՀՀ-ից դեպի սփյուռքի երկրներ ժամանակ առ ժամանակ շարունակվող պարբերական արտագաղթերը՝ իրականում հայության նորանոր շերտեր զոհաբերելով «հալեցնող կաթսայի» ծուլարանին:

Հետևաբար, ժամանակի ընթացքում մշակութային ցնցում (culture shock), հուսահատություն ապրած, արտագաղթելու համար ափսոսած, ուծացման փաստի հետ ամեն օր առերեսվող և ժամանակի ընթացքում ինքնագիտակցության եկող, ինչպես նաև ազգային, ընտանեկան, մշակութային և այլ արժեքների առումով դեռևս ոչ լրիվ աղճատված երբեմնի հայաստանցու, ինչպես նաև մահմեդական միջավայրի «շնորհիվ» տակավին հայապահպանված Մերձավոր և Միջին Արևելքի հայության համար հնարավորինս վաղ Հայրենիք վերադարձը (ինչին ավելի հաճախակի ենք ականատես լինում վերջին տարիներին երկրում քաղաքական ու տնտեսական կյանքի աստիճանաբար կայունացմանը զուգընթաց, ինչպես նաև վերոհիշյալ տարածաշրջանում տիրող կործանարար պատերազմների արդյունքում) շատ ավելի իրատեսական և հեռանկարային կարող է լինել ընտանիքի, սերնդի պահպանման, ինչպես նաև Հայաստանի սոցիալ-տնտեսական և ռազմավարական շահերի տեսակետից:

Եվ քանի որ «հայապահպանությունը» սփյուռքում, ընդհանուր առմամբ, աննպատակ է, այսինքն՝ նպատակային, իրատեսական, գործնական հայրենասիրության հենք չունի, տվյալ դեպքում՝ Հայաստանակենտրոն չէ, ընդհակառակը՝ «անհայրենիք» է, հետևաբար, շատ ու շատ հայապահպանված, այսինքն՝ հիմնականում ծնող(ներ)ի դրդմամբ մեկօրյա կամ ամենօրյա հայկական դպրոց հաճախած և իր «պարտքը» ազգի նկատմամբ «մեծ զոհողությունների գնով» (ֆինանսական, հանգստի, ազատ ժամանակի հաշվին) իրականացրած երիտասարդ սերունդն ընդհանուր առմամբ իրեն ազատագրված է զգում ազգային (էթնիկ) ծագման նկատմամբ պարտավորություններից և կարող է իրեն թույլ տալ կյանքի մնացած հատվածը ազատ՝ իր ապրած միջավայրի համապատասխան տնօրինել (օտար բարձրագույն կրթություն, օտար աշխատատեղ, օտար ամուսնություն և այլն): Մինչև որ, օտար միջավայրում իր տեղը գտած, ինչպես նաև խառնամուսնության կամ լավագույն դեպքում ներազգային ամուսնության հետևանքով համապատասխանաբար խառնածին կամ անգամ ազգային զավակների ծնունդները կգան համոզելու, որ ազգի, իսկ, իրականում, ամենակարևորը՝ Հայաստանի ու նրա ռազմավարական շահերի համար, նրանք «անելիք չունեն»: Հայկական դպրոց, եկեղեցի, ակումբներ են հաճախել, համայնքային գործունեության մեջ ներգրավվել, որպես ինքնամխիթարություն և օտարության մեջ սոսկ ինստիտուցիոնալ հայապահպանությամբ ազգի նկատմամբ իրենց պարտքը որպես պարտականություն իրականացրած լինելու համար: Հետևաբար, ժամանակի ընթացքում (մանավանդ Հայաստանի անկախացումից հետո) հայրենադարձվելու, Հայրենիքում ապրելու և աշխատելու, հայրենի հողը պաշտպանելու համար վարժված չեն, պատրաստված չեն, հետևաբար և՝ պարտավորված չեն: Ուստի, գլոբալ քաղաքացի լինելն ամենահարմար գաղափարախոսական ծածկն է դառնում երբեմնի «հայապահպանված» հայերի այդ խմբի համար, ինչը և նրանք դյուրությամբ ընտրում են որպես ինքնություն:

Այնպես որ, ժամանակի ու տարածության մեջ դիտելով, ինչպես նաև հաշվի առնելով առանձին բացառությունները, հատկապես Արևմուտքի երկրների հետզհետե «սիմվոլիկացող» հայերը Հայաստանի, նրա ռազմավարական և խնդրահարույց տարածաշրջանից բխող իրական շահերի համար դառնում են գործնականում «ամորֆ», եթե չասենք՝ «վիճարկելի», հավաքականություն, մշտապես ենթակա, պատրաստ, պարտավոր ծառայելու իրենց ապրած երկրների քաղաքական շահերին ու դոկտրինաներին՝ որոշակի վտանգ ներկայացնելով Հայաստանի ազգային անվտանգության շահերին: Հանգամանք, որին անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները բազմաթիվ անգամներ ականատես են եղել և լինում հասարակական-քաղաքական և այլ ասպարեզներում ներգրավված արտերկրի որոշ հայրենակիցների կողմից: Բացառությունները հաշվի առնելով՝ այս երևույթը նույնն է նաև առայժմ դեռ օտար ամուսնություն չկնքած, թե՛ արևմուտքի, և թե՛ արևելքի երկրներում բնակվող, առավելապես ազգային կառույցների հետ առնչվող, այսպես կոչված՝ «հայապահպանված» (սփյուռքահայ, թե՝ նախկին հայաստանցի) հայության գերակշիռ մասի համար ևս, քանի որ ամենից առաջ և ամենից առավել նրանք իրենց երկրների քաղաքացիներն են՝ ուսում, կրթություն, աշխատանք, վարձատրություն են ստանում այնտեղ, դրանից բխող իրավունքներով ու պարտականություններով:

Պարզ մի փաստ ինքնին խոսում է Հայոց ցեղասպանությունից հետո սփյուռքի վերածված մեր հայրենակիցների «անհայրենիք հայապահպանվածության», հետևաբար՝ համազգային առաջնահերթությունների հանդեպ քաղաքական-համայնքային կառույցների վարած աշխատանքի անարդյունավետության մասին: Անցած հարյուրամյակի ընթացքում՝ դարասկզբին կովկասյան (1914-1916 թթ.) և կիլիկյան (1916-1918 թթ.) կամավորական շարժումների համեմատ նույն դարավերջին ղարաբաղյան շարժման տարիներին (1988-1994 թթ.) սփյուռքի մեր հայրենակիցների ֆիզիկական ներգրավվածությունը հայրենի տարածքների ազատագրման ջանքերին հազարապատիկ անգամներ նվազել է:

Այսպես, եթե XX դարասկզբին Կիլիկիայի ազատագրման նպատակով կամավորական շարժմանը մասնակցելու համար միայն ԱՄՆ-ից անդամագրվել էին 5.000 հայ, ապա դարավերջին՝ Ղարաբաղյան շարժման տարիներին (1988-1994 թթ.) կամավորագրվել և ռազմական գործողություններին ոչ տևական մասնակցություն են ունեցել 11, իսկ տևական՝ 3 ամերիկահայ:

(Շարունակելի)

Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, սփյուռքագետ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Կյանքի և կեցության փիլիսոփան

Մանուկ Ա. Հարությունյանի (ծննդյան 70-ամյակի առթիվ)

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ փիլիսոփայության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի սոցիալական փիլիսոփայության բաժնի վարիչ: Մի քանի տասնյակ գիտական հոդվածների և մենագրությունների հեղինակ: Այդ թվում՝ «Ապրելակերպ. անձնավորություն. գիտատեխնիկական հեղափոխություն» (մենագրություն, 1874 թ.), «Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը» (մենագրություն, 2014 թ.), «Հայաստան. օտարացած հասարակություն» (2007 թ., համահեղինակ):

1969 թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ համակարգում:

Մանուկ Հարությունյան - փիլիսոփայի մասին գրելիս ամենաառաջին միտքը, որ այցելում է մեզ՝ այն է, որ նրա փիլիսոփայական մտածումներն ու դիտարկումները մեկ ներդաշնակ ամբողջություն են կազմում նրա անձի, նրա հոգևոր ու հուզական աշխարհի հետ, և նրա աշխատանքներում մշտապես ներկա են կյանքի, սոցիալական իրականության, մարդու հոգևոր ելևէջումների ճշմարտացի դիտորդն ու մասնակից է՝ միաժամանակ: Մանուկ Հարությունյանի «խոկման երկունքները» անհատի էկզիստենցիալ գոյության, «իսկական» մարդկային կեցության մասին են, նրանց գոյության անանց արժեքների բացահայտման, ճանաչման ու փայփայման՝ կայացման կոչեր են:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի վաղեմի գիտաշխատող Մանուկ Արսենի Հարությունյանը ծնվել է 1946 թ., դեկտեմբերի 14-ին, Երևանում: Ավարտել է Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության բաժինը (1969 թ.): Նույն թվականի օգոստոսին աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի նորաստեղծ ինստիտուտում: Այնուհետև զորակոչվել է խորհրդային բանակ՝ զինվորական ծառայության:

1970 թ. վերջին սկսել է իր աշխատանքային գործունեությունը ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում՝ նախ որպես ավագ լաբորանտ, ապա կրտսեր և ավագ գիտաշխատող: Առ այսօր աշխատում է նույն ինստիտուտում:

1978 թ. հրատարակել է աշխատանք՝ նվիրված ապրելակերպի սոցիոլոգիական և գաղափարախոսական մեկնաբանության հիմնահարցերին: Մ.Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը այդ տարիներին նշանակալիորեն ընդլայնվել է՝ ապրելակերպի տիպաբանության ուսումնասիրությունից մինչև գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքների հրատապ հարցերը: Ամփոփելով կատարված աշխատանքը՝ 1983 թ. հրատարակել է «Գիտատեխնիկական հեղափոխություն. Ապրելակերպ. Անհատ» (մեթոդաբանական ասպեկտ) մենագրությունը: 1984 թ. պաշտպանել է գիտական ատենախոսություն՝ «Գիտատեխնիկական հեղափոխություն. Ապրելակերպ. Անհատ» /մեթոդաբանական ասպեկտ/ թեմայով և ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան: Նույն թվականին ՀՍՍՀ ԳԱ նախագահության կողմից արժանացել է «Գովեստագրի»:

1990 թ. Մ.Հարությունյանը նշանակվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի «Միտք» պաշտոնաթերթի խմբագրի տեղակալ: Նրա անմիջական նախաձեռնությամբ խմբագրությանը կից ստեղծվել է սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն: Հայ սոցիոլոգներ Գևորգ Պողոսյանի և Ալեքսանդր Թադևոսյանի ղեկավարությամբ 1990թ. կազմակերպել և անցկացրել է սոցիոլոգիական հետազոտություն՝ նվիրված Հայաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր կառուցվածքի, նրա կարգավիճակի բարեփոխման հարցերին: Հետազոտության արդյունքները լայնորեն լուսաբանվել են հանրապետական մամուլում՝ ազդակելով այդ հարցերի շուրջ հասարակական աշխույժ բանավեճերին:

Վերջին քսանհինգ տարիներին հայ հասարակության փոխակերպման բարդ և հակասական գործընթացներին նվիրված Մ.Հարությունյանի բազմամյա ուսումնասիրություններն ընդհանրացվել են Գ.Պողոսյանի և Վ.Առաքելյանի հեղինակակցությամբ լույս ընծայված՝ «Հայաստան. օտարացած հասարակություն» արժեքավոր աշխատության մեջ (Եր., «Լուսաբաց», 2007, 169 էջ):

2007 թ. սեպտեմբերից առ այսօր փիլիսոփայական գիտությունների դոկտոր Մանուկ Հարությունյանը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի փիլիսոփայության ամբիոնի վարիչն է: Նա մեծ ուշադրություն է դարձնում փիլիսոփայական գիտելիքների հաղորդման, դրանց որակի բարձրացման խնդրին, 2007 թվականից դասավանդում է կենտրոնում՝ վարելով «Փիլիսոփայություն», «Իրավունքի փիլիսոփայություն» դասընթացները: Միաժամանակ, կենտրոնի քաղաքագետ-մագիստրոսների համար պատրաստել և դասավանդում է «Քաղաքական վերլուծություն» և «Իշխանության լեգիտիմության ժամանակակից տեսություններ» դասընթացները: Քաղաքագետ-մագիստրոսների համար 2016թ. պատրաստել և հրատարակել է «Իշխանության լեգիտիմության ժամանակակից տեսություններ» մեթոդական ձեռնարկը: Դրան զուգահեռ ՀՀ ԳԱԱ ասպիրանտների համար դասավանդում է «Գիտության փիլիսոփայություն» դասընթացը:

Օտարման հիմնախնդրին նվիրված իր բազմամյա մեթոդաբանական հետազոտություններն ընդհանրացրել է «Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը» հիմնարար ու մոնումենտալ աշխատության մեջ (Երևան, «Նաիրի», 2014, 648 էջ): Գիրքը ստիպում է լրջորեն խորհրդածել մեր պառակտված և օտարված ազգային կյանքի կնճիռների, դրանց պատճառների մասին: Մ.Հարությունյանի խիստ, թիրախին խփող ձևակերպումները մեզ հաճախ թեև գցում են տարակուսանքների մեջ, բայց միգուցե հենց դրանում է նրա արժեքը և, եթե կուզեք իմանալ, գրքի կենդանի հմայքը, ի տարբերություն խելամիտ, բայց տաղտկալի, հետաքրքրիր, բայց թեթևամիտ, անկեղծ, սակայն մակերեսային գրքերի: Մ.Հարությունյանի գիրքը դրանցից ակնհայտորեն առանձնանում է:

2015թ. Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի թ. 013 մասնագիտական խորհրդի նիստում փայլուն կերպով պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Օտարումը հետխորհրդային հայ հասարակությունում. հիմնախնդրի սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն» խորագրով: Հայրենական սոցիալական փիլիսոփայության մեջ առաջին անգամ Մ.Հարությունյանին հաջողվել է ամփոփ և խորությամբ ներկայացնել օտարման դասական և հետդասական հիմնական հայեցակարգերը: Տեղին է հիշել Գյոթեի անզուգական մի ասույթի իմաստնությունը. «Չկա ոչինչ ավելի գործնական, քան լավ տեսությունը»:

Ասում են, որ բժշկական պրակտիկան բաղկացած է չորս փուլից: Իրականացվում է վերլուծություն-զննում, տրվում է ախտորոշում, արվում է կանխատեսում և նշանակվում դեղամիջոց: Իհարկե, փիլիսոփան՝ բժիշկ չէ, և նրա մտքի ուղեծիրն այլ է: Սակայն, այնուամենայնիվ, պետք է ասենք, որ այդ բոլոր փուլերն էլ առկա են Մ.Հարությունյանի աշխատանքում: Ուստի՝ գիրքը նաև յուրօրինակ թեսթ է՝ մեր խռովահույզ ժամանակներում հայի տեսակի, ազգային որակների, մտածողության, կեցության հանգրվանների լույսն ու ստվերը, պերճանքն ու թշվառությունը ի ցույց դնող:

Նրան բարին ենք մաղթում Հովհ.Շիրազի խոսքով՝ բախտիդ ծառը թող միշտ բերքով կռանա...

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

Վերապատրաստում Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանում

Ս/թ հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամ»-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի աշխատակազմը՝ ՀՀ ՊԿԱ պրոռեկտոր, ծրագրի ղեկավար Թերեզա Խեչոյանը, ծրագրի համակարգող, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը, տեխնիկական խորհրդատուներ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՏՏ բաժնի պետ Արմեն Սարգսյանը և ՀՀ ՊԿԱ ՏՏ բաժնի պետ Ալեքսան Դավթյանը այցելեցին Դրեզդենի (Գերմանիա) տեխնոլոգիական համալսարան ուսումնասիրելու հեռավար կրթության իրականացման միջազգային փորձը, ինչպես նաև «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագրի բովանդակային առանձնահատկությունները:

Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանը Գերմանիայի գերազանցության աստիճան ունեցող 11 համալսարաններից մեկն է. այն շնորհվել է 2012 թ.: Համալսարանը նորարարության, ճարտարագիտության և հետազոտության արտահանման գերազանցության կենտրոն է:

Վերապատրաստման ընթացքում ուսումնասիրվեցին հեռավար կրթության կազմակերպման առանձնահատկությունները, կրեդիտային բաշխվածությունը, որակի ապահովումը: Գերմանիայում հեռավար կրթությամբ հիմնականում հետաքրքրված են արդեն աշխատող անձինք, որոնք գիտելիքների թարմացման կամ լրացուցիչ կրթության կարիք ունեն՝ աշխատանքում առաջխաղացման նպատակով:

Վերապատրաստման օրերին ներկայացվեց նաև Գերմանիայի Հագենի համալսարանի գործունեությունը, քանի որ Հագենի համալսարանը ամբողջովին հեռավար կրթություն առաջարկող միակ պետական համալսարանն է Գերմանիայում:

Այցելություններ կազմակերպվեցին բիզնեսի կառավարման ֆակուլտետ (MBA), տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին և գրադարան:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնում ներկայացվեց «Student-life-cycle management» համակարգը, որը ներկայումս գտնվում է մշակման փուլում: Այն միացնում է հեռավար ուսուցման համակարգը և համալսարանի ներքին տեղեկատվական համակարգը, համալսարանի վեբկայքը, որը նաև ծառայում է որպես ուսումնական նյութերի շտեմարան, ուր ուսանողները մուտք ունեն մեկ միասնական նույնականացմամբ, ինչպես նաև «Opal» համակարգը:

«Կանաչ հանրագիտարանի» կես դարը

ՀԱՀ-ի հոբելյանը ԳԱԱ-ում ներկայացված նոր հատորով

Ստեղծագործական աշխույժ մթնոլորտում անցավ ՀՀ ԳԱԱ-ի նախագահության նիստերի դահլիճում Հայկական Սովետական Հանրագիտարանի 50-ամյակին նվիրված հանդիսությունը, որը որպես մտավորական տոնահանդես հայտարարեց ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Շնորհավորելով հոբելյանը, նա հանրագիտարանը համարեց մշակութային այն նվաճումներից, որը կատարել է իր դերը, իր նշանակությունը իմաստավորել անցած 50 տարիների ընթացքում:

Նրա գնահատմամբ, երախտավորների գործն այսօր շարունակում է նոր սերունդը՝ հրապարակ հանելով նոր, ուշագրավ հատորներ, որոնց թվում է բացառապես օրերս լույս ընծայված վերջին հրատարակությունը՝ «Հանրագիտական բառարանի» առաջին ստվար հատորը:

Դա համընդգրկուն հանրագիտական բառարան է՝ հայկական բազմահատոր հանրագիտարանի նորացված, թարմացված, համառոտված տարբերակը: Այն լինելու է 60 հազար բառերի, տերմինների ժողովածու՝ երկու հատորով:

Այժմ հրատարակության է պատրաստվում երկրորդ հատորը, որը լույս է տեսնելու եկող տարի:

Ռ. Մարտիրոսյանը ներկաներին տեղյակ պահեց, որ աշխատանքներ են տարվում նոր բազմահատոր հանրագիտարանի ստեղծման ուղղությամբ (նախնական հաշվումներով՝ 10 հատոր):

ԳԱԱ նախագահը ակադեմիայի նախագահության պատվոգրերով և գովեստագրերով պարգևատրեց Հայկական հանրագիտարանի խմբագրության մի խումբ աշխատողների:

ՀՍՀ-ի 50-ամյակը ողջունեց ՀՀ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանը, ի մասնավորի ասելով, որ հանրագիտարանային բազահատորյակի առաջիկա հրատարակության կոնկրետացման գործին կոմիտեն կողքից չի նայի:

Հայկական Սովետական Հանրագիտարանը (13 հատոր) ստեղծվել է 1974-1987 թվականներին:

Տարեկան տպագրվել է 1 հատոր, իսկ ամբողջ հրատարակությունն ավարտվել է 1987-ին: Տպաքանակը 100 հազար էր, այն զիջում էր միայն Սովետական մեծ հանրագիտարանին և հավասար էր Ուկրաինական խորհրդային հանրագիտարանի տպաքանակին, ամբողջ տպաքանակը սպառվում էր 1-2 շաբաթում՝ բացառապես բաժանորդագրությամբ, որն այդ ոլորտում նախադեպը չուներ:

Հանրագիտարանի աշխատանքների մասին խոսք ասաց գլխավոր խմբագիր տնօրեն Հովհաննես Այվազյանը:

«Հայաստանի անկախացումից հետո հրատարակչության ամենամեծ հաջողությունն այն եղավ, որ կարողացանք նախ դիմակայել ժամանակների դժվարություններին, ապա գրահրատարակչության համար ոչ այնքան բարենպաստ պայմաններում կարողացանք շարունակել լույս ընծայել տարատեսակ հանրագիտարաններ, ընդ որում՝ այնպիսի հանրագիտարաններ («Հայկական հարց», «Ոսկեփորիկը» և այլն), որոնց անհրաժեշտությունը օդի ու ջրի պես զգացվում էր այդ շրջանում: Այդ ժամանակներից մեզանում փաստորեն սկսվեց թեմատիկ հանրագիտարանների հրատարակությունը, որը շարունակվում է մինչև օրս»,-ասաց նա:

Խոսելով «Հանրագիտական բառարանի» մասին, հռետորն ասաց, որ նրանում ընթերցողը, համընդհանուր հանրագիտական հասկացություններից բացի, կարող է գտնել նաև մեր կյանքի վերջին 25 տարիներին կատարված կարևոր իրադարձությունների, հասարակարգային փոփոխությունների, աշխարհի հետ ՀՀ-ի և ԼՂՀ-ի նոր հարաբերությունների, մեր նվաճումների ու դժվարությունների, վերջին շրջանի հասարակական-քաղաքական գործիչների, գիտնականների և բազմաթիվ այլ անձանց ու երևույթների մասին հոդվածներ, որոնք գալիս են լրացնելու հայ հանրագիտական պաշարը:

Ներկաները դիտեցին «Հայկական հանրագիտարանի կես դարը» վավերագրական ֆիլմը, որը պատրաստել է Արփեն Մովսեսյանի ստեղծագործական խումբը:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիրներ են եղել Վիկտոր Համբարձումյանը (1974 թ.), Աբել Սիմոնյանը (1974-1979 թթ.), Մակիչ Արզումանյանը (1979-1988 թթ.), Կոստանդին Խուդավերդյանը (1988-1999 թթ.): 1999-ից Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիրն է Հովհաննես Այվազյանը:

Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ
«ՀՀ»

ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնախնդիրը» միջազգային գիտաժողովը

Սույն թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում մեկնարկեց «Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնախնդիրը» միջազգային գիտաժողովը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը:

Գիտաժողովի պլենար նիստում Եվա Սալկևիչ-Մյուներլինը (Լեհաստան) հանդես եկավ «Հայոց ցեղասպանության վնասների հատուցման հարցի քննարկումը միջազգային իրավունքի նորմերի հիման վրա» զեկուցմամբ, Արմեն Մարուքյանը՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր ճանապարհային քարտեզի ուրվագծման հարցի շուրջ» զեկուցմամբ, Հարություն Խաչատուրյանը (Ֆրանսիա)՝ «Տեղեկատվության ներկայացումն ու հատուցման խնդիրը» զեկուցմամբ, Արա Պապյանը՝ «Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը (22 նոյեմբերի 1920 թ.) որպես Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման իրավական հիմք» զեկուցմամբ:

Նիստերի ընթացքում ներկայացվեցին ևս 28 զեկուցումներ «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած ֆինանսական և գույքային կորուստները», «Ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական խնդիրները և հայ ժողովրդի կրած մշակութային-քաղաքակրթական կորուստները», «Հայոց ցեղասպանության և հատուցման խնդրի արտացոլումը գրականության մեջ», «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած ժողովրդագրական կորուստները», «Հայոց ցեղասպանության պատմագիտական խնդիրները» և այլն:

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի «Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության (SPS)» ծրագրի աշխատաժողովը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի «Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության (SPS)» ծրագրի աշխատաժողովը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Աշոտ Հովակիմյանը, Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Հրանտ Մաթևոսյանը:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին ծրագրի շրջանակներում հետազոտական կենտրոնների, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքները, ինչպես նաև ծրագրի առաջնահերթությունները, հայտերի ներկայացման և դրանց գնահատման ընթացքը:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին

- Տեղեկատվական անվտանգություն
- Շրջակա միջավայրի անվտանգություն
- Պաշտպանություն ընդդեմ քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (CBRN) սպառնալիքների
- Անվտանգություն ապահովող առաջադեմ տեխնոլոգիաներ հիմնական թեմաները, որոնց ներկայացման համար ՆԱՏՕ-ի կողմից հրավիրվել էին ոլորտի արտասահմանյան և հայ հայտնի մասնագետներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ



Մոսկվայի «Наука» հրատարակչությունում լույս է տեսել ՀՀ ԳԱԱ նախագահության սփյուռքի բաժնի պետ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանյա Բարսեղյանի «Управление составных динамических систем» (Կապակցված համակարգերի ղեկավարումը) մենագրությունը:

Պրոֆեսոր Վ. Ռ. Բարսեղյանի մենագրությունը նվիրված է կապակցված գծային դինամիկ համակարգերի և բազմակետային միջանկյալ պայմաններով համակարգերի ղեկավարմանը: Հատկապես ուշադրություն է դարձվել կապակցված գծային համակարգերի լրիվ ղեկավարելիության և դիտելիության անհրաժեշտ և բավարար պայմանների ստացմանը: Ստացված պայմանները ստացիոնար դեպքում իրենց ավարտուն տեսքով համեմատելի են Կալմանի հայտնի պայմանների հետ: Բացահայտված են կապակցված համակարգերի ղեկավարելիության և դիտելիության որակական հատկությունները: Առաջարկված են կապակցված համակարգերի, չանջատվող բազմակետային միջանկյալ պայմաններով և ժամանակի միջանկյալ պահերին ֆազային վեկտորի կոորդինատների տարբեր մասերի վրա դրված սահմանափակումներով համակարգերի ղեկավարման խնդիրների լուծման կոնստրուկտիվ եղանակներ: Որպես կիրառություն կառուցված են կոնկրետ համակարգերի համար ղեկավարման, օպտիմալ ղեկավարման և ստաբիլացման խնդիրների բացահայտ լուծումները:

Մենագրությունը նախատեսված է կիրառական մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի մասնագետների լայն շրջանակների՝ ղեկավարման և դիտման տեսությամբ, մաթեմատիկական մոդելավորման, համակարգային վերլուծությամբ և նրանց կիրառությամբ զբաղվողների համար, ինչպես նաև այդ ոլորտներում մասնագիտացող ուսանողների և ասպիրանտների համար:

***

Լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտաշխատող Գոհար Իսկանդարյանի «Հայաստան-Իրան հարաբերությունները՝ Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991-2014 թթ.)» մենագրությունը՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Աշխատությունում վերլուծվում են Հայաստան-Իրան հարաբերությունները 1991-2014 թթ., որտեղ հեղինակը անդրադառնում է Հայաստան-Իրան հարաբերություններին՝ ներկայացնելով հայ-իրանական տնտեսական, քաղաքական, գիտամշակութային կապերը, ինչպես նաև՝ ղարաբաղյան հակամարտության և Հայոց ցեղասպանության նկատմամբ Իրանի դիրքորոշումը: Գրքում առաջին անգամ վեր են հանվում բոլոր այն խնդիրները, որոնք երկու երկրների ղեկավարությունների կողմից հարթվել են տարիների ընթացքում, ինչպես նաև այն խնդիրները, որոնք կարոտ են հավելյալ ուշադրության:

Աշխատությունը գրվել է ՀՀ ԱԳՆ, ՀՀ պաշտպանության նախարարության պատմաքաղաքական վարչության, ՀՀ մշակույթի նախարարության Հայաստան-Իրան մշակութային համագործակցության վերաբերյալ արխիվային նյութերի, ԻԻՀ-ում ՀՀ բոլոր դեսպանների և ՀՀ արտգործնախարարների ու հայ-իրանական հարաբերություններում իրենց դերակատարությունն ունեցած մի շարք այլ պետական պաշտոնյաների, Իրանում հայկական թեմերի ներկայացուցիչների հետ իրականացրած հարցազրույցների հիման վրա:

Մենագրությունը նախատեսված է իրանագետների, արևելագետների, միջազգայնագետների, ինչպես նաև այդ ոլորտներում մասնագիտացող ուսանողների և ասպիրանտների համար:

Նաիր ՅԱՆ

Թագավորական դամբարանի գաղտնիքները

Աղցքը պեղելու անհրաժեշտության մասին հնագետները ժամանակ առ ժամանակ բարձրաձայնել են, բայց գումար չի եղել, չեն պեղել: Անցյալ տարի կառավարությունը վերջապես ուշադրություն դարձրեց Աղցքին, գումար հատկացրեց, ու հնագիտական արշավախումբը սկսեց պեղումները:

Մոտ մեկ տարի է անցել, հնագետները պեղել են ընդամենը կես հա տարածք և արժանահավատ բացահայտումներ կատարել: Ավելի ճիշտ՝ հողի շերտերի տակից պատմական ճշմարտություն ու քողարկված ապացույցներ են ի հայտ եկել: Արշավախմբի ղեկավար, հնագետ Հակոբ Սիմոնյանն, ամփոփելով դեռևս անավարտ պեղումների արդյունքը, նշեց. «Մեզ ուրախություն պատճառողը ոչ միայն գտածոներն են, այլև այն տարածքը, որտեղից պեղել ենք այդ գտածոները: Պատկերացնո՞ւմ եք՝ խոնարհված եկեղեցի, որից հետքեր են պահպանվել միայն: Ու այդ եկեղեցու խորանի սալահատակի տակ հայտնաբերել ենք քարե երեք սնդուկ: Իսկ այդ եկեղեցին Աղցքից վանքն է, որ 4-րդ դարասկզբին է թվագրվում: Նշանակում է՝ մենք գործ ունենք Հին Արևելքի քրիստոնեական ամենահին եկեղեցու հետ, որ Հայաստանում է կառուցվել: Մեր իմացած սիրիական հնագույն եկեղեցին թվագրվում է 5-րդ դարին. Աղցքից վանքը, փաստորեն, ավելի հին է: Մեր հայտնագործությունը համաքրիստոնեական նշանակություն ունի և քրիստոնյա աշխարհի համար կարևորագույն բացահայտում է: Ու հենց վաղ քրիստոնեական այս հուշարձանի սալահատակի տակ մենք հայտնաբերեցինք ոսկորներ պարունակող երեք սնդուկ: Դրանց կափարիչների վրա խաչ է դրոշմված: Կասկած չկա, որ այդ ոսկորները հայոց արքաների մասունքներն են, որոնք չէին կարող ամփոփվել պատահական վայրում:

Քերթողահայ» Մովսես Խորենացին և պատմիչ Փավստոս Բուզանդն իրենց աշխատություններում պատմում են, որ պարսիկները հայոց արքաների դամբարանները կողոպտել են, ծով հարստության հետ տարել նաև մեր թագավորների ոսկորները՝ հավատացած որ այդպիսով կթուլացնեն հայոց ուժը և Հայաստանը կհպատակեցնեն Պարսկաստանին: Վասակ Մամիկոնյանն իր հեծելազորով հետապնդել է նրանց, սրախողխող արել ու վերադարձրել մեր թագավորների ոսկորները:

Հնագետները, պատմությանը հայտնի դեպքերը վերլուծելով ու համադրելով իրենց հայտնաբերած գտածոների հետ, համոզմունք են հայտնում, որ արքաների մասունքները վերահուղարկավորվել են հենց Աղցքից վանքում:

«Ինչպես Շրիմանը ժամանակին ապացուցեց, որ Հոմերոսի՝ Տրոյային վերաբերող պատմությունը իսկություն է, այնպես էլ մեր պեղումներն են ցույց տալիս, որ Խորենացու և Բուզանդի վկայությունները ճիշտ են: Սա անհավանական թվացող իրողություն է, որ կհետաքրքրի *նաև* օտարազգի գիտնականներին ու հատկապես իրանցիներին: Ամենայն հավանականությամբ մեր հայտնաբերած ոսկորները պատկանում են Արտաշիսյան և Արշակունի արքաներին: Ու հստակ է, որ Հայաստանի տարածքում Աղցքը հայոց արքաների՝ առայժմ միակ հայտնաբերված դամբարանն է»,- ներկայացրեց Հակոբ Սիմոնյանը:

Հարկ է, որ ոսկորները լաբորատոր հետազոտության՝ ԴՆԹ-ի ենթարկվեն, որպեսզի պարզվի, թե ինչպիսի գենետիկա են ունեցել մեր արքաները: Հստակ արդյունք ստանալու համար անհրաժեշտ են օրգանական նյութեր, օրինակ՝ կալոգեն: Եթե այն չկա, ԴՆԹ-ն պարզելը դժվար է:

Հնագետների մեծագույն ցանկությունն է Աղցքում ստեղծել Հայոց պետականության թանգարան: Աղցքում բացվել է հայոց արքաների մասունքները պարունակող երեք սնդուկներից երկուսը: Հնագետներն իրենց հայտնագործության մասին տեղեկացրել են նաև իշխանություններին ու առաջարկել երրորդ սնդուկը բացել ՀՀ իշխանությունների, արտասահմանյան հյուրերի և լրագրողների ներկայությամբ:

ԿԱՀԻՐԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

Արաբ պատմաբան Մահմուդ Ալավիի զեկուցումը՝ նվիրված Նիկոլայ Հովհաննիսյանին և նրա գիտական վաստակին

2016 թ. հոկտեմբերի 18-19-ը Կահիրեի համալսարանում կայացել է միջազգային գիտաժողով՝ նվիրված «Հայկական ուսումնասիրությունները արաբական աշխարհում»- «Ալ դիրասաթ ալ արմանիյաթ ֆի -լալամի արաբիյաթ», վերին աստիճանի կարևոր և մեծ հետաքրքրություն ներկայացնող հիմնահարցին: Գիտաժողովին մասնակցել են գիտնականներ Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Իրանից, Մեծ Բրիտանիայից, Բուլղարիայից և Հայաստանից: Գիտաժողովն անցկացվել է դեռևս 2007 թվականին Կահիրեի համալսարանում Եգիպտոսի կառավարության որոշումով ստեղծված Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի շրջանակներում, որը ծավալել է բավականին ակտիվ գործունեություն: Այս տարվա հոկտեմբերին կայացած գիտաժողովը թվով վեցերորդն էր, որն ընթանում էր Կահիրեի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Գաբել Գադ Նասարանի և Կահիրեի համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան դոկտոր, պրոֆեսոր Մութազ Սաիդ Աբդալլահի հովանու ներքո: Ներկա էին Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար, ասորագետ, դոկտոր Սալահ Մահգուբ Իդրիսին , Կահիրեի այլ համալսարանների՝ Այն Շամսի, Հելուանի պրոֆեսորներ, Կահիրեի Ազգային վավերագրերի կենտրոնի և Եգիպտոսի Ազգային մատենադարանի մասնագետներ և այլն: Կահիրեի համալսարանը Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի ամենամեծ և լայն հեղինակություն վայելող գիտակրթական կենտրոնն է, որն ունի 250 000 ուսանող:

Վեցերորդ գիտաժողովում ներկայացվել է մոտ 30 զեկուցում: Զեկուցողներն անդրադարձել են հայ-արաբական պատմական և պատմամշակութային փոխառնչություններին՝ սկսած վաղ միջնադարից ընդհուպ նորագույն շրջանը, լուսաբանվել է հայերի մասնակցությունը Եգիպտոսի Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և արաբական այլ երկրների քաղաքական, ռազմական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքում, նրանց ներդրումը արաբական երկրների տարբեր ոլորտների զարգացման մեջ՝ սկսած ֆաթիմյան շրջանից մինչև նոր և նորագույն շրջանները: Վերստին ընդգծվեց Մուհամմադ Ալիի կառավարման շրջանում հայերի մեծ դերակատարումը Եգիպտոսի կառավարման համակարգում, Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար Նուբարյանի գործունեությունը և այլն, հարցեր, որոնք բոլորն էլ իրենց արտացոլումն են գտել և հանգամանորեն լուսաբանվել տաղանդավոր հայ արաբագետ՝ Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատություններում, որոնց զգալի մասը նաև արաբերեն լեզվով հրատարակվել է արաբական տարբեր երկրներում:

Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի վեցերորդ միջազգային գիտաժողովում առանձին, հատուկ զեկուցում էր նվիրվել պրոֆեսսոր Նիկոլայ Հովհաննիսյաի գիտական գործունեությանը, նրա գիտական վաստակին ու դրա արժեքավորմանը, նրա բացառիկ ներդրմանն արաբագիտության և լայն առումով՝ նաև արևելագիտության զարգացման մեջ: Զեկուցումը, որը կրում էր «Նիկոլայ Հովհաննիսյան գիտնական-պատմաբանը» խորագիրը, ներկայացրեց Կահիրեի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավարներից դոկտոր, պրոֆեսոր Մահմուդ Ալավին: **Ուշագրավ է այն փաստը,** որ հայ արաբագետը չէր մասնակցում Կահիրեի այդ գիտաժողովին, **ինչը մի առանձին երանգ է հաղորդում նրա բացակայությամբ նրան նվիրված զեկուցման իմաստին ու փաստին: Դոկտոր Ալավին եղել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, հանդիպել և զրույցներ ունեցել պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հետ գիտական տարբեր հարցերի շուրջը, այդ թվում և Արևելագիտության ինստիտուտի ու Կահիրեի համալսարանի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի համագործակցության շրջանակներում:**

Ստորև ներկայացնում ենք դոկտոր, պրոֆեսոր Մահմուդ Ալավիի «Նիկոլայ Հովհաննիսյան գիտնականը» զեկուցման հիմնադրույթները.

«Նիկոլայ Հովհաննիսյանը պատմաբան-գիտնական է, ով գրել է հանրագիտարանային նշնակություն ունեցող արաբական երկրների պատմության քառահատորյակը (խոսքը ,Արաբական երկրների պատմություն. VII դ - 2005 թ.» չորս հատորների մասին է, որը հրատարակվել է հայերեն, Երևան, 2007, ապա և արաբերեն, Հալեբ, 2011 թ.-Ա.Փ.): Այս ուսումնասիրությունը խորքային վերլուծություն է, որն ընթերցողին բազմատեսակ և լայն գիտելիքներ ու տեղեկություններ է հաղորդում արաբական երկրների պատմության մասին ՝ սկսած ամենավաղ շրջանից մինչև քսաներորդ դարը ընկած ժամանակահատվածը:

Այդ մեծանուն գիտնականը արաբագիտության ոլորտում հեղինակել է ավելի քան հինգ հարյուր գիրք և աշխատասիրություն, որոնք տպագրվել են նաև արաբական և եվրոպական երկրներում:

Նիկոլայ Հովհաննիսյանը խոշոր մասնագետ է և լայն համբավ ունի արևելագիտության մեջ: Նա Հայաստանում արաբագիտության հիմնադիրն է և քառասուն տարուց ավել մեծ նվիրումով ղեկավարել է այդ ոլորտը: Նրա աշխատանքները վերաբերում են արաբական երկրների պատմության տարբեր ոլորտներին, նաև հայ-թուրքական հարաբերություններին և այլն: Նա բազմաթիվ գիտական մրցանակների է արժանացել, այդ թվում և Ֆուլբրայթի, ԱՄՆ, (1993-1994): Նիկոլայ Հովհաննիսյանը նաև 2007 թ. Կահիրեի համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետում ստեղծված հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադիրներից է»:

Պրոֆեսոր Հովհաննիսյան գիտնականին և նրա վաստակին նվիրված հատուկ զեկուցումն իր բնույթով եզակի և իր նախադեպը չունեցող երևույթ է, որը վկայում է ոչ միայն նրա բարձրակարգ գիտնական լինելու անվիճելիությունը , այլև նրա ստեղծած հայկական գիտական դպրոցի կենսունակությունն ու մրցունակությունը:

Հայ գիտնականի մասին Մուհամմադ Ալավիի զեկուցումը լսվեց մեծ հետարքրությամբ:

Արաքս ՓԱՇԱՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, արաբագետ, միջազգային գիտաժողովի մասնակից

Մի՛ սպանեք մեր ապագա մայրերին

Վերջին տարիներին իրականացված հետազոտությունները վկայում են հղիության սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների տարածման վտանգավորության մասին: Հղիության արհեստական ընդհատումների քանակով Հայաստանը Չինաստանից և Ադրբեջանից հետո աշխարհում զբաղեցնում է երրորդ հորիզոնականը: Համանման խնդիր ունեցող այլ երկրների փորձը վկայում է, որ այս երևույթը կարող է հանգեցնել ցավոտ հետևանքների հանցավորության աճի, արական սեռի ներկայացուցիչների ահագնացող արտագաղթի, կանանց առևանգման դեպքերի ավելացման:

Սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների պատճառով Հայաստանում տարեկան 1400 աղջիկ այդպես էլ լույս աշխարհ չի գալիս: 1990-ականներից ի վեր Հայաստանում խախտվել է նորածինների բնականոն հարաբերակցությունը: 2012 թ.-ին այդ հարաբերակցությունը կազմել է 114 տղա 100 աղջկա դիմաց, այն դեպքում, երբ բնականոն է համարվում 102-ից 106 տղա՝ 100 աղջկա դիմաց հարաբերակցությունը: Արատավոր այս պրակտիկան կանխելու համար Հայաստանում կազմակերպվում են հանրային իրազեկմանը միտված տարաբնույթ միջոցառումներ: Մտորման տեղիք են տալիս «Ընտանիքի ակադեմիա» ՀԿ կողմից իրականացված դիտարկումները: Ըստ այդ ուսումնասիրությունների, եթե հղիության սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների երևույթը շարունակվի, ապա կանխատեսումների համաձայն, մինչև 2060 թ. Հայաստանը կկորցնի գրեթե 93.000 ապագա մայրերի: Նորածինների սեռերի անհամամասնությունն իր բացասական ազդեցությունը կունենա ընտանիք կազմելու հնարավորության վրա և արտագաղթի մեծացման հավելյալ պատճառ կհանդիսանա:

Կանխատեսումներն, իրավ որ, ավելի քան մռայլ են: Աղջիկներին տղաներով փոխարինելու պատճառով, Հայաստանի բնակչությունը մինչև 2060 թ. կնվազի հավելյալ 80.000 մարդով (սա ներկայում Հայաստանի 2 տարվա ծնունդների թիվն է): Հետազոտությունների համաձայն, դեպքերի ճնշող մեծամասնության (գրեթե 80%-ում) ամուսինները միասնաբար են որոշում, թե քանի տղա և քանի աղջիկ պետք է ունենան:

Վտանգավոր այս միտումը կարող է հանգեցնել դեմոգրաֆիական աղետի: Աղետ, որի հետևանքները կարող են անդառնալի լինել: Սա լրջագույն այն խնդիրն է, որը կոչնակ զարկելու և մտահոգվելու առիթ պիտի տա բոլորին: Բոլորին՝ անխտիր...

Ճապոնացիները խառնել են գեները և... հրեշ ստացել

Անհավանական գաղափար ձեռնարկեցին ճապոնացի գիտնականները՝ փորձելով նախնադարյան մարդու ուղեղի բջիջներից ստեղծել կենդանի արարած:

Փորձարարները ստեղծեցին մանրագույն կիսամարդիկ: Սույն իրողությունը կարող է գլխիվայր շուռ տալ ժամանակակից գիտությունը: Դոկտոր Մասա Նարիտան ասաց, որ այդ արարածներին իրենք ստեղծել են լաբորատորիայում, վերջին 10 ամիսների ընթացքում: Թեև սրվակների մեջ դրանք կարծես մարդկային պտղի տեսք ունեին, սակայն «ծնվեցին» վախեցնող այլակերպումներով:

Դրանցից մի մասի գլուխները տձև են, մարմինները՝ ծռմռված կամ ավելորդ ոտքեր ունեն: Հոնքեր չունեն, ամեն մի ձեռքի վրա՝ 6-8 մատ և գրեթե թափանցիկ մաշկ:

- Դրանք իսկական հրեշներ են,- հայտարարեց տագնապած գենետիկներից մեկը: Նա որոշեց բարձրաձայն խոսել այդ գաղտնի փորձերի մասին, քանի որ, նրա կարծիքով, «այդ նախագիծը ամբողջությամբ բժշկական էթիկայի կոպիտ խախտում է», և ինքն այլևս չի կարող հաշտվել նման իրողության հետ:

«Այդ էակները լույս աշխարհ են եկել հինգ հազար տարվա վաղեմության մարդկային ուղեղի բջիջների և կենդանի մանրէների գենետիկ նյութի միացման արդյունքում: Դրանք տեղադրվեցին սրվակների մեջ և աճում էին շատ ավելի արագ, քան սովորական մարդ արարածի պտուղը:

Այդ էակներից ոչ մեկին վստահաբար մարդ չես կարող կոչել, սակայն ինձ թվում է, որ այդ արարածները պետք է որ մարդկային հոգի ունենան»:

Այնուհետև շարունակում է.

«Նրանք աշխատում էին փորձերի և սխալների, դրանք շտկելու, նորից փորձելու մեթոդով: Գենետիկները բավարար փորձ և գիտատեխնիկական միջոցներ չունեին՝ նման բարդության գիտական աշխատանք իրականացնելու համար»:

Գաղափարի հեղինակ, նշանավոր գենետիկ Մասա Նարիտան ասում է, որ իրենք տասնյակ փորձեր են կատարել այդ էակների ստեղծման համար: Նրանք օգտագործել են անցյալ տարի Ալպերում, հավերժական սառածության գոտում գտնված և հրաշալի պահպանված մարդկային ուղեղի բջիջները:

Նա, ինչպես նաև Ճապոնիայի գիտական հանրության երևելի ներկայացուցիչները, մտահոգված են ճապոնական գենետիկայի համաշխարհային մակարդակից հետ մնալու փաստով և երդվել են շարունակել աշխատանքները՝ այդ եղանակով մարդ ստեղծելու համար:

Իսկ այդ փորձերով անհանգստացած նույն գենետիկը նախազգուշացնում է.

- Շտապելու հետևանքով նրանք շփոթել, բազմաթիվ ոչ ճիշտ քայլեր են կատարել կամ խառնել են գեները: Եվ հենց այս հանգամանքը ցույց է տալիս, թե որքան վտանգավոր կարող են լինել այդ կերպ մարդկային արարած ստեղծելու փորձերը: Եվ իմանալով այս ամենը, աշխարհի շատ գիտնականներ միանգամայն իրավացի կլինեն պահանջելու, որ Ճապոնիայում դադարեցվեն նման փորձերը:

«Համաշխարհային նորություններ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի ներքոհիշյալ բաժինների վարիչների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա) բանասիրական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան,

բ) գիտական գործունեության առնվազն 10 տարվա փորձ

գ) վերջին 5 տարվա ընթացքում հեղինակ է առնվազն գիտական 10 աշխատության:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում,

բ) երկու լուսանկար՝ 3 x 4 չափի,

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

դ) ինքնակենսագրություն,

ե) անձնագրի պատճենը,

զ) թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանը հավաստող փաստաթուղթ,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,

ը) բնութագիր վերջին աշխատավայրից,

թ) հրատարակված աշխատությունների ցանկ՝ հաստատված համապատասխան կարգով,

ժ) քաղվածք առաջադրման մասին որոշումից:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում (բացի շաբաթ և կիրակի օրերից) գրականության ինստիտուտի գիտքարտուղարին:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15, հեռ. 56-32-54

***

«ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ ինստիտուտի բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի վարիչի և երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժնի վարիչի թափուր տեղերի համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

- բարձրագույն կենսաբանական կրթություն,
- կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան,
- գիտական աշխատանքի 10 տարվա փորձ:

Վերոնշյալ թափուր պաշտոնների մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- երկու լուսանկար 3x4 չափի,
- անձնագրի պատճենը,
- աշխատանքային գրքույկի պատճենը,
- ինքնակենսագրություն,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- կենսաբանական գիտությունների դոկտորի դիպլոմի պատճենը,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
- բնութագիր վերջին աշխատավայրից:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում՝ ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ:

Հասցեն՝ Երևան 0063, Աճառյան 1, ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ, հեռախոս՝ 628 211:

***

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հայտարարում է մրցույթ ինստիտուտի արդի հայերենի բաժնի գիտաշխատողի (1 տեղ) թափուր տեղի համար:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) լուսանկար

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

զ) գիտական աստիճանը հաստաստող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) տեղեկանք մշտական բնակության վայրի,

թ) հրատարակված աշխատությունների ցանկ,

ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից, հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորիչ 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 060-62-35-77:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 23.11.2016թ. Տպաքանակը՝ 500: gitutyun@sci.am
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА